



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԴՊԻՐՆԵՐՈՒ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ Ս. ՆԱՅԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՕՇԱՎՆ 48ՐԴ- ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԻԹՈՎ

Կիրակի, Նոյեմբեր 6-ը Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ ծխական համայնքին համար եղաւ ուրախութեան ու յիշատակելի օր մը:

Արդարեւ, այդ օր Եպիսկոպոսական հանդիսաւոր պատարագով նշուեցաւ Եկեղեցւոյ օծման 48-րդ տարեդարձը եւ տեղի ունեցաւ դպրաց ձեռնադրութիւն:

Պատարագեց եւ օրուան պատգամը փոխանցեց Արեւմտեան Թեմի Բարեջան Առաջնորդ Բարձշ. S. Մուշեղ Ս. Վոր. Մարտիրոսեան: Ս. Խորանին սպասարկեցին Գերապ. Սիւռոն Ծ. Վոր. Ազնիկեան եւ շրջանիս հոգեւոր հովի Վոր. S. Ռազմիկ Զիկյ. Խաչատուրեան. Ներկայ էր նաեւ Գերշ. S. Եփրեմ Ս. Վոր. Թապագեան:

Յաւատացեալներ խուռներամ շտապած էին Եկեղեցի, մասնակցելու հոգեպարար արարողութեան եւ լիցքաւորուելու օրուան խորհուրդով: Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարուեցաւ Եկեղեցւոյս սարկաւագաց ու դպրաց դասին կողմէ, դեկապարութեամբ խմբավար Պիրս. Կոմիտաս Քէշիշեանի: Երգեցողութեան կը մասնակցեին նաեւ կիրակնօրեայ դպրոցի աշակերտները:

Նախքան քարոզը, «Այսօր Ուրախացան» շարականի երգեցողութեամբ խորան բարձրացան ձեռնադրութեան համար պատրաստուած 10 դպիրները՝ Յակոբ Տեմիրճեան, Սանուել Պայրամեան, Յայկ Օհաննեսեան, Սարգիս Նաճարեան, Ատիս Պապլանեան, Կերի Մարգարեան, Ալետիս Փաթաթեան, Նարեկ Խաչատուրեան, Վուժ Պայրամեան եւ Կերի Պերպերեան: Զեռնադրութեան յատուկ աղօթքներու, սաղմոսներու եւ շարականներու երգեցողութեամբ տեղի ունեցաւ հոգեպարար արարողութիւնը եւ ներկաները երկիւղածութեամբ հետեւեցան թէ ինչպէս Սրբազն Յայրը, ծնկաչոր ընծայեալներուն փոխանցեց դպրութեան 4 աստիճանները, խարտավիլակութեամբ Գերապ. S. Սիւռոն Ծ. Վոր. Ազնիկեանի:

- Կարգ Դռնապանութեան, որպէսզի աղօթքով եւ երկիւղածութեամբ, հաւատացեալներուն առջեւ բանան Աստուծոյ տան դուռը:

- Կարգ Ընթերցանութեան, որպէսզի ընթերցանութեան ճամբով իրենց մտքերը զարգացնեն, Աստուծոյ խօսքերուն եւ օրէնքներուն տեղեակ ըլլան եւ Եկեղեցւոյ մէջ զգուշութեամբ կարդան Անոր խօսքերը:

- Կարգ Երդմնեցուցութեան, գոց սորվին «Հրաժարիմք»ը, վանեն չարը եւ փառաւորեն Յայրը, Որդին եւ Սուրբ Յոգին:

- Կարգ Զահընկալութեան, ուր ձեռնադրուող դպիրներուն իշխանութիւն կը տրուէր մեր սուրբ Եկեղեցւոյ ջահերն ու կանթեղները վառելու եւ մարելու:

Արարողութենեն Ետք Սրբազն Յայրը իր խօսքը նոր ձեռնադրուող դպիրներուն ուղղելով կարդաց Աւետարանի հետեւեալ պատգամը. »Տէր Աստուած, Զու Ս. Յոգիիդ ճառագայթներով լուսաւորէ այս նուիրեալներուն միտքը, որպէսզի հաւատքով սպասարկեն Զու Ս. Եկեղեցիիդ«:

«Այն աստիճանին որ կը ցանկայիք» ըսաւ Սրբազնը, »Աստուած արժանի ըրաւ ձեզի: Դուք համբերութեամբ եւ ջանասիրութեամբ օրինակ պիտի ծառայէք ձեր շրջապատին եւ Աստուծոյ աջքին գովելի եւ պարկեշտ ծառայողներ պիտի ըլլաք: Ձեր կեանքի ընթացքին յարատեւ պիտի սորվիք ձեր ունեցածը պահել եւ ձեր գիտելիքները աւելցնել: Որքան որ սորվիք, այնքան պիտի աճիք հոգեաես, պիտի զարգանաք մտաւորապէս եւ այդ պիտի ըլլայ երաշխիքը, որպէսզի ձեր քայլերը ընթանան յաջողութենե յաջողութիւն: Այսօր, դուք Եկեղեցական պաշտօնի եւ ծառայութեան հրաւիրուեցաք, որպէսզի դպրութեան ճամբով արժեւորեք դուք ձեզ. ձեր գործը իբրեւ լուսաւոր ճրագ ձեզմէ առաջ թող ընթանայ, որպէսզի դուք պայծառանաք ու պայծառացնէք Աստուծոյ տունը:

«Միաց Նահատակաց Եկեղեցւոյ հիմնադրութեան 48-րդ տարեդարձին նուիրուած այս Ս. Պատարագին, Աստուած մեզ բոլորս արժանի ըրաւ եւ ինծի շնորհ պարգեւեց, որ Եկեղեցւոյ նուիրեալ 10 սպասարկուներուն դպրութեան 4 աստիճանները շնորհենք, որոնք հիմնական առաջին աստիճաններն են մեր Եկեղեցւոյ ծառայութեան եւ մեր ծառայական կեանքին: Վստահ Եղէք, որ այսպիսի դպրութեան աստիճաններու արժանացած պատանի եւ Երիտասարդ նուիրեալներէն է, որ մեր Եկեղեցին հարստացած է Քահանաներով, Վարդապետերով, Եպիսկոպոսներով եւ Կաթողիկոսներով:

«Միրելի դպիրներ եւ հաւատացեալներ, գեղեցիկ գուգարիպութեամբ մը այսօրուան Աւետարանին պատգամը հաւատքի մասին է, որովհետեւ հաւատքի վրայ հիմնուած է ամէն աստիճան, նուիրում եւ ծառայութիւն: Վստահ Եղէք, որ մեր ունեցած հաւատքին վարձատրութիւնը Աստուած պիտի տայ մեզի Երկնքի արքայութեան մէջ: Եկէք այսօր, ինդրենք Աստուծմէ, որ մեզմէ իւրաքանչիւրին պարգեւէ իմաստութեան հոգի, որպէսզի ծառայական ինչ կեանքի եւ վիճակի մէջ ալ գտնուինք, գիտակցօրէն հաւատանք եւ գիտակցօրէն կեանքի վերածնք մեր ծառայական կեանքը: Այսօր մեր ծնողներն ու հարազատները հոգեկան գոհունակութեամբ վայելեցին իրենց սիրելիներուն դպրութեան աստիճանի տուչութիւնը. Վստահ եմ, որ անոնք իրենց ծառայական կեանքով, գործնապէս պիտի արժեւորեն իրենց դպրութեան կոչումը, Աստուծոյ կամքին ու պատուիրաններուն հետեւելով եւ հնազանդելով:

«Միաց Նահատակաց Եկեղեցւոյ հիմնադրութեան տարեդարձը, դպիրներուն ձեռնադրութիւնը եւ մեր ծառայական կեանքի ուխտի

վերանորոգութեան այս առիթը, բոլորիս համար թող իրաւեր ծառայէ, մեր հաւատքին մեջ երբեք չերկմտլու եւ չընկրկելու. մեր կեանքին կեդրոնը պահենք մեր Աստուածը, մեր փրկիչը Յիսուս Քրիստը եւ հաւատարիմ հետեւորդները ըլլանք իր կամքին, իբրեւ հաւատարիմ մշակները իր այգիին»:

Զարողի աւարտին Առաջնորդ Սրբազանը փառք եւ գոհութիւն յայտնեց Աստուծոյ, որ կը գտնուի Յովիտի հայ համայնքին հետ եւ միասնաբար կը նշէ Եկեղեցւոյ հիմնադրութեան 48-րդ տարեդարձը, իսկ դպրաց ձեռնադրութիւնը եկաւ հարստացնելու Եկեղեցւոյ ծառայող Նուիրեալներուն շարքը:

Սրբազան Յայրը օրինեց յիշատակը բոլոր անոնց, որոնք հաւատքով հիմը դրին այս Եկեղեցւոյ: Աղօթեց Եկեղեցւոյս այսօրուան սպասարկուներուն համար, որպեսզի Աստուած առաջնորդէ անոնց քայլերը, զիրենք փրկէ Երեւելի ու աներեւոյթ փորձութիւններէն եւ ծառայական ուխտի մեջ պահէ անխախտ:

Պատարագի աւարտին տեղի ուեցաւ հոգեհանգստեան պաշտոն հոգիներուն համար բոլոր անոնց, որոնք Եկեղեցւոյ անդաստանէն ներս գործեցին ու անցան եւ այժմ կը ննշեն անոր հովանիին ներքեւ: Ապա Առաջնորդ Սրբազան Յօր գլխաւորութեամբ Եկեղեցական թափօրը առաջնորդուեցաւ »Աւետիսեան« սրահ, ուր Եկեղեցւոյ Տիկնաց Միութեան կողմէ պատրաստուած էր մատաղը, նուիրատուութեամբ Տիկին Ժանեթ Վարդազարեանի, նուիրուած իր ամուսնոյն՝ Ռազմիկ Վարդազարեանի յիշատակին:

Երկիւղած մթնոլորտի մեջ կատարուեցաւ մատաղօրինեքի արարողութիւնը:

Սրբազան Յայրը բարձր գևահատեց Տիկնաց Միութեան եւ Յոգաբարձութեան անդամներուն մատուցած ծառայութիւնը, ինչպես նաև մատաղին իրենց նիւթական օժանդակութիւնը բերող բոլոր հաւատացեալները:

«Պահապանիչով», «Կիլիկիա» մաղթերգով եւ «Մեր Յայրենիք» քայլերգով վերջ գտաւ հոգեպարար արարողութիւնը, որմէ Ետք հաւատացեալները կարգով մօտեցան եւ վերցուցին մատաղի իրենց բաժինը եւ հոգենորդ ուրախութեամբ վերադարձան իրենց տուները:

## EPISCOPAL DIVINE LITURGY AND ORDINATION OF ACOLYTES ON THE 48<sup>TH</sup> ANNIVERSARY OF HOLY MARTYRS CHURCH IN ENCINO

On Sunday, November 6<sup>th</sup>, 2011, the 48<sup>th</sup> anniversary of Holy Martyrs Church in Encino was celebrated with Episcopal Divine Liturgy, ordination of acolytes, and the blessing of *madagh*.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy and delivered the sermon. Very Rev. Fr. Muron Aznikian and Rev. Fr.

Razmig Khatchadourian assisted at the altar. H.E. Archbishop Yeprem Tabakian was also present at the services.

During the service, the Prelate ordained as acolytes Hagop Demirjian, Manuel Bayramian, Haig Ohanessian, Sarkis Najarian, Adiss Bablanian, Gary Markarian, Avedis Patatian, Nareg Khatchadourian, Vrej Bayramian, and Gary Berberian.

Prior to the sermon, the ten candidates ascended the altar where they knelt as the Prelate, with the reading and singing of prayers, hymns, and Psalms, ordained them as acolytes.

Addressing the newly ordained acolytes, the Prelate stated that through their service they will serve as an example to others and urged them to continuously increase their knowledge for the more they learn the more they will grow spiritually and mentally and better serve our Church. Stressing the importance of the day, the Prelate noted that young adults and adults who have been ordained as acolytes, which is the first level of service in the Armenian Church, have gone on to become priests, monks, Bishops, Archbishops, and Catholicos, and thus enriched our Church with their service.

The Prelate noted that the day's Scripture reading on faith coincided beautifully with the ordinations as service and devotion is built on faith, and our faith will be rewarded by God through eternal life. Let us beseech Almighty God to grant us the wisdom to remain on our path of service, said the Prelate, and addressing the acolytes said, "today your parents and relatives were filled with spiritual joy as they witnessed your ordinations. We are confident that you will remain committed to your calling and serve devotedly and in fulfillment of God's will."

"May this blessed day be a day of renewal for us all and an inspiration to stay strong in our faith, live Christ centered lives, and remain the faithful followers of our Lord Jesus Christ", concluded the Prelate.

At the conclusion of his sermon, the Prelate gave thanks to God for granting the opportunity to celebrate the 48<sup>th</sup> anniversary of the Church and to ordain the acolytes which will enrich the Church in its service. The Prelate honored the memory of past servants for their contributions to the progress of the Church, and prayed for God to safeguard the current servants and lead them in their service.

Following the requiem, the Prelate was led in a procession to "Avedessian" Hall where he conducted the blessing of *madagh*, prepared by the parish Ladies Auxiliary and sponsored by Mrs. Jeanette Vartazarian in memory of her husband Razmig Vartazarian.

After the ceremony, the Prelate commended the Parish Pastor, Board of Trustees, and Ladies Auxiliary for their service, and Mrs. Vartazarian for her donation.

The day's celebration came to a close with the Prelate's benediction, and the Cilician and Armenian national anthems.